Հանրապետական
մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ **<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Յա. Զարոբյանի անվան N 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ**

Թեմա՝ Թիմային աշխատանք, համատեղ դասավանդում

Վերապատրաստող, մենթոր՝ Արմենուհի Մելքոնյան

Ուսուցչի օգնական՝ Երանուհի Առաքելյան

2022

Բովանդակություն

Ներածություն----------

Համատեղ դասավանդման բաղադրիչները----------

Երկու և ավելի դասավանդող ուսուցիչների համագործակցությունը----------

Համատեղ դասավանդման նպատակներն ու խնդիրներն ----------

Թիմային դասավանդում ----------

Եզրակացություն----------

Օգտագործված գրականության ցանկ----------

Ներածություն

Համատեղ դասավանդումը ուսուցման նոր ռազմավարություն է: Այն առաջացել է անգլերեն՝ Co – teaching բառից: Համատեղ դասավանդումն իրականացնում են երկու դասավանդող ուսուցիչը և ուսուցչի օգնականը համատեղ, որտեղ առաջին պլանում է համագործակցված աշխատանքը դասի պլանավորումը, կազմակերպումը և գնահատումը աշակերտների խմբերի հետ:

Համատեղ դասավանդումը հանրակրթական դպրոց հաճախող զարգացման առանձնահատկություններ ունեցող աշակերտների համար մատուցվող կրթական և աջակցող ծառայությունների համագործակցային մոտեցումներից մեկն է: Այս մոտեցմամբ՝ համատեղ դասավանդումը ներառում է համագործակցություն կրթական գործընթացի բոլոր ոլորտներում՝ անկախ դասարանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների առկայությունից: Համատեղ դասավանդումն ուղղված է բոլոր սովորողների կրթական կարիքները լրացնելուն:

Այս պարագայում որքան էլ որ դասը մեկից ավելի ուսուցիչներով վարելը անսովոր կարող է լինել ուսուցիչների համար , սակայն ցայսօր մեր երկրի կրթական անցումային համակարգի պայմաններում , նոր այլընտրանքային մոտեցումները ժամանակի պահանջն են դարձել:

Մասնագիտական հմտությունների փոխանակումը, սովորողների կրթական կարիքները հասկանալու ավելի մեծ հնարավորությունը , ընդհանուր կրթության շրջանակներում հատուկ կարիքներով սովորողների համար ավելի մեծ ծրագրային հնարավորություն կնձեռնի, ինչն էլ թույլ կտա նաև բարելավել այդ սովորողների հարաբերություններն իրենց հասակակիցների հետ, ինչպես նաև մասնագետների համար ավելի թեթև աշխատանքային մթնոլորտ ստեղծելը: Սակայն կան մի քանի ընդհանուր պայմաններ, որոնց ճիշտ կիրառման դեպքում է միայն հնարավոր այս մոդելը արդյունավետ համարել: Դրանք են՝ համատեղ դասավանդող մասնագետների նպատակաուղղված համագործակցությունը, միանման աշխարհայացքը և աշխատանքի կազմակերպման ճիշտ և բավականաչափ ընտրված ժամանակահատված:

Ներառական կրթության և բազմաթիվ տարրատեսակ դասարանների առկայության պայմաններում համատեղ դասավանդումը , ինչը առկա է եղել շատ

երկրներում ունի բավականն երկար փորձ , հանրակրթության արդիականացման արդյունավետ եղանակներից մեկն է:

Հիմնահարցի արդիականությունը

Համատեղ դասավանդման մոդելները հնարավորություն են ընձեռում ուսուցիչներին, որպեսզի նրանք համատեղ հանդես գան դասարաններում: Այս մոտեցումը հնում չի եղել , այդ պատճառով կարող ենք արդիական համարել : Համատեղ դասավանդման առաջադրվող մոդելը հնարավորություն է տալիս հատուկ մանկավարժներին և ուսուցիչների օգնականներին աշխատելու ուսուցիչների հետ միասին՝ դասերն արդյունավետ պլանավորելու և անցկացնելու համար: Աշակերտները նշում են, որ իրենց ավելի շատ է աջակցություն տրամադրվել, օգտագործվել են դասավանդման տարբեր ոճեր: Համատեղ դասավանդումը ուսուցիչներին տալիս է անհրաժեշտ աջակցություն ունենալու հնարավորություն, միաժամանակ աշակերտների համար ապահովելով ներգրավվածություն դասապրոցեսում: Համատեղ դասավանդումը, ինչ-որ տեղ, մարտահրավերներ է ուսուցիչների համար, քանի որ վերջիններս պետք է վերանայեն իրենց աշխատանքի ոճն ու միմյանց փոխլրացնեն իրենց ուժեղ կողմերով:

Հետազոտության նպատակները՝

- Պարզել, ինչպես կարող է համատեղ դասավանդումը խթանել ուսուցիչների , ինչպես նաև ուսուցչի օգնականների ինքնակրթմանը, ինքնավերլուծությանը
- Նպաստել դասարաններում ավելի արդյունավետ գիտելիքի ձեռքբերմանը
- Ապահովել դասարաններում ՈՒՀՁ-ի կիրառումանը և նրա միջոցով համընդհանուր ներառման ապահովմանը
- Նպաստել մանկավարժների միջև ջերմ համագործակցային մթնոլորտի ձևավորմանը:
- Փոխըմբռնման պայմաններում ձևավորվող արդյունավետ ջերմ մթնոլորտի ամրապնդմամբ մեկից ավելի ուսուցիչների աշխատանքային փոխհարաբերությունների զարգացման ապահովում:

Հետազոտության խնդիրները

- Բացահայտել, թե ինչպես կարող է համատեղ դասավանդումը խթանել ուսուցիչների , ինչպես նաև ուսուցչի օգնականների ինքնակրթմանը, ինքնավերլուծությանը

- Ծրագրել և կազմակերպել ավելի արդյունավետ գիտելիքի ձեռքբերումը տարբեր դասարաններում, փորձարկել և անցկացնել համատեղ դասավանդում՝ տարբեր մոդելներով
- Տարբեր դասարաններում փորձարկել ՈՒՀՁ-ի կիրառումանը և նրա միջոցով համընդհանուր ներառման ապահովմանը
- ՈՒՀՁ-ի միջոցով նպաստել դասանյութի առավել մեծ ծավալների յուրացմանը
- Համատեղ դասավանդման և դասանյութի բազմատեսակ մատուցման միջոցով և համընդհանուր ներառման ապահովում տարբեր բազմազանությամբ երեխաների համար, ինչպես նաև դասաժամին ձանձրույթի բացառում
- Դասավանդման տարբեր ռազմավարություններ կիրառման միջոցով ԿԱՊԿՈՒ սովորողներին բավարար ժամանակի տրամադրման ապահովում և վերջիններիս մոտիվացիայի բարձրացում

Համատեղ դասավանդումը

մոդել է, որը շեշտում է նույն թիմի ներսում բոլոր անդամների միջև համագործակցությունն ու հաղորդակցումը, ինչը ուղղված է բոլոր սովորողների կրթական կարիքները լրացնելուն:

Այս մոդելն ունի մի շարք առավելություններ՝ մասնագիտական հմտությունների փոխանակում, սովորողների կրթական կարիքները հասկանալու ավելի մեծ հնարավորություն, ընդհանուր կրթության շրջանակներում հատուկ կարիքներով սովորողների համար ավելի մեծ ծրագրային հնարավորություն, Ինչը թույլ կտա նաև բարելավել այդ սովորողների հարաբերություններն իրենց հասակակիցների հետ, ինչպես նաև մասնագետների համար ավելի թեթև աշխատանքային մթնոլորտ:Սակայն կան մի քանի ընդհանուր պայմաններ, որոնց ճիշտ կիրառման դեպքում է միայն հնարավոր այս մոդելը արդյունավետ համարել:

Դրանք են՝ համատեղ դասավանդող մասնագետների նպատակաուղղված համագործակցությունը, ադմինիստարատիվ աջակցությունը, միանման աշխարհայացքը և աշխատանքի կազմակերպման ճիշտ և բավականաչափ ընտրված ժամանակահատված:

Համատեղ դասավանդում է համարվում դասավանդման այն տեսակը, երբ երկու կրթական աշխատողներ աշխատում են միասին՝ սպասարկելով տարաբնույթ

ընդունակություն ունեցող սովորողների հետ: Առավել հաճախ հանդիպում են հետյալ մասնագետների համատեղ դասավանդող թիմերը՝

Հատուկ և ընդհանուր կրթություն իրականացնեղ դասավանդողներ յուրահատուկ մասնագիտական ուղղվածության և հատուկ կամ ընդհանուր կրթաության դասավանդողներ երկու ընդհանուր կրթության դասավանդողներ

խոսքի/լեզվական խնդիրներ լուծող մասնագետ և հատուկ կամ ընդհանուր կրթության մասնագետ սոցաշխատող և հատուկ կամ ընդհանուր կրթության դասավանդող այլ աջակցող մասնագետներ կամ կամավորներ և ընդհանուր կամ հատուկ մասնագետ

ընտրովի առարկաների դասավանդող և ընդհանուր կամ հատուկ մասնագետ:

Նման խմբային գործունեությունն իրականցվում է նրա համար, որպեսզի սովորողների կրթական պահանջների բավարարումն ավելի արդյունավետ լինի: Այս խմբերը կարող են կազմված լինել երկարատև կամ կարճատև ժամանակահատվծի հիմքերով՝ նրանք կարող են միասին աշխատել մեկ ուսումնական տարի կամ մեկ նախագծի, սովորողների մոտ կոնկրետ հմտության զարգացման որևէ կարճաժամկետ ծրագրի շրջանակներում:

Ինչպես բնորոշել համատեղ դասավանդումը?

Գրականության մեջ արտացոլված են Համատեղ դասավանդման հինգ կամ վեց տեսակներ: Վերջիններս ներմուծվել են գիտություն 1993թ-ին և մինչ այժմ շարունակում են հետազոտվել և նորանոր մշակումներով ներկայացվել ոլորտի մասնագետների կողմից:

Կրտսեր դպրոցում այս մոդելի հիմնական առավելությունը Ընդհանուր կրթական ծրագիր իրականացնող և հատուկ մանկավարժի համատեղ աշխատանքն է: Հատուկ կարիքներ ունեցոսղ սովորողներն այս դեպքում կունենան հատուկ մանկավարժական աջակցություն: Եթե երկու մասնագետները կարողանան համակարգված և հետևողականորեն աշխատել, ապա բոլոր սովորողների կրթական կարիքները կստանան լիարժեք լուծում:

Համատեղ դասավանդման բաղադրիչները

Երբ դասարանում լինում են երկու և ավել ուսուցիչներ, դա չի նշանակում, իրականանում է համատեղ դասավանդում:

Համատեղ դասավանդում է համարվում դասավանդման այն տեսակը, երբ երկու կրթական աշխատողներ աշխատում են միասին՝ սպասարկելով տարաբնույթ ընդունակություն ունեցող սովորողների հետ:

Այս մոդելը ենթադրում է նրանց համագործակցությունը դասապրոցեսում և դրանից առաջ:

Համատեղ դասավանդումը առաջ է բերում հետևյալ երեք բաղադրիչների առկայությունը.

1 Երկու և ավելի դասաանդող ուսուցիչների համագործակցությոնը

2 Աշակերտների բազմազանությունը

3 Դասաժամի ճիշտ օգտագործումը

Երկու և ավելի դասավանդող ուսուցիչների համագործակցությունը:

Համատեղ դասավանդման այս բաղադրիչը իր մեջ սահմանում է , որ համատեղ դասավանդման մեջ ընդգրկված են երկու, երբեմն՝ երկուսից ավելի մանկավարժներ: Նրանցից առաջինն ուսուցիչն է , իսկ երկրորդն՝ ուուցչի օգնականն, որի դերում կարող է հադես գալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին աջակցող թիմի ցանկացած մասնագետ՝ հատուկ մանկավարժ , լոգոպեդ, սոցիալական մանկավարժ:Համտեղ դասավանդում կարող է իրականացվել նաև երկու առարկայական ուսուցիչների կողմի. օրինակ՝ անգլերենի ուսուցիչն և գերմաներենի ուսուցիչն :

Համտեղ դասավանդման մեջ հետաքրքիր փորձառություն է որպես ուսուցչի օգնական նաև ծնողների ավագ դասարանի աշակերտնե են առանձին աշակերտների կամ տվյալ դասարանի աշակերտների ներգրավումը:

Այն մանկավարժները , որոնք հանրակրթական դպրոցի ծրագրերին տիրապետում են ,կարողանում են համակարգել նրանք միանում են հատուկ մանկավարժներին, ովքեր մասնագիտացված են առանձին աշակերտների կրթական կարիքները որոշելու և ուսումնական ծրագիրն ու դասավանդում այդ կրիքների համապատխանեցնելում մեջ: Ահա և համագործակցության արդյունքում առարկայական ծրագրերն ու դասավանդման մեթոդները հարմարեցվում են բոլոր աշակերտների կարիքներին և հնարավորություն տալիս կարիքների վրա հիմնված դասավանդում:

Դասարան որտեղ աշակերտները բազմազան են, ներառյալ հաշվանդամություն ունեցող երեխաներ և տարբեր կարիքներ ունեցող խմբերի դասավանդում:

Այս կետը սահմանում է, որ ուսուցիչները դասավանդոմ են բազմազան կարիք ունեցող երեխաների խմբի՝ ներառյալ հաշվանդամություն ունեցող աշակերտների:

Այս պարագայում դասավանդումն իրականացվում է աջակցող մասնագտների և հատուկ մանկավարժների համատեղ ջանքերով: Այն երեխաները որոնք վկայագրված են և նրանց հետ աշխատում են անհատական ուսումնական պլանով (ԱՈՒՊ) , երբեմն կրթության այնպիսի առանձնահատուկ պայմանների կարիք են ունենում , որ նրանց ցուցաբերող մասնագիտական աջակցությունը անհրաժեշտ է լինում տեղափոխել դասասենյակ և իրականացնել դասավանդման գործընթացում: Կարևոր է նաև հաշվիառնել այն հանգամանքը , որ յուրաքանչյուր աշակերտ ունի կրթական տարբեր կարիքներ և կարողություններ: Դասարանները բազմամակարդակ են և այնտեղ սովորում են տարբեր կարիք ունեցող երեխաներ:

Դասավանդման մեկ դասասենյակ և դասավանդման ժամանակի ճիշտ օգտագործում:

Այս կետի համաձայնն՝ համատեղ դասավանդումն իրականացվում է մեկ դասասենյակումմ կամ մեկ տարածքում, իսկ դասավանդման համար սահմանված ժամանայը նոյնն է, ինչ միայնակ դասավանդման դեպքում:

Ուսուցչի հետ միասին ո՞վ կարող է համատեղ դասավանդող լինել

. ուսուցչի օգնականը

. այլ ուսուցիչ

. որևէ ծնող կամ աշակերտ

. հոգեբանը, լոգոպեդը, սոցիալական մանկավարժը հատուկ մանկավարժը

Այս կետերից երևում է , որ դասավանդման ժամանակ առարկայական ուսուցչի հետ որպես համատեղ դասավանդող , բացի ուսուցչի օգնականից , կարող են հանդես գալ նաև այլ մանկավարժական աշխատողներ կամ աշակերտներ ու ծնողներ:

Համատեղ դասավանդման նպատակներն ու խնդիրները

Փոխազդեցություններ. Համագործակցային հմտություններ դպրոցում դասավանդողների համար գրքում Մերիլին Ֆրենդը և Լին Քուկը բնորոշում են համագործակցային դասավանդումը որպես նյութի մատուցման հատուկ ձև, որը հիմնված է համագործակցության վրա: Դրա նպատակը տարաբնույթ կրթական պահանջները կատարելն է : Բոլոր տարիքի և հմտությունների աստիճաններով սովորողները շահում են այլընտրանքային այս ուսուցումից, քանի որ այն հնարավորություն է տալիս մեծացնել դասավանդողի ուշադրությունը փոքր խմբային գործունեություններում:

Համատեղ դասավանդումն իրենից ներկայացնում է երկու կամ ավել լիազորված մասնագետների համագործակցություն, ովքեր կիսում են հանձնարարված պարտականություններ, աշխատում են մի խումբ սովորողների հետ մեկ ընդհանուր աշխատանքային տարածքում:

Առանձնացվում են համատեղ դասավանդման տարբեր մոդելներ՝ կախված դասարանում համատեղղ դասավանդողների դերերի, գործառությունների ու պատասխանատվությունների բաշխումից և դասավանդման ձևաչափից:

Այժմ կներկայացնեմ համատեղ դասավանդման հինգ հիմնական մոդելները:

<< Աջակցված դասավանդում >>



Այս մոդելի դեպքում՝ մեկ ուսուցիչը դասավանդում , առաջնորդում է ողջ դասարանը: Տալիս է ընդհանուր ուղղորդուներ , իսկ ուսուցչի օգնականը դիտարկում է առանձինն աշակերտնեի վարքը , առանձին ուղղորդումներով օգնում է նրանց՝ առավելագույնս ներգրավվելու ասապրոցեսին: Ըստ էության ուսուցչի օգնականը ուղղորդում է գլխավոր ուսուցչին ՝ հասնելու դասի հիմնական նպատակին և առանձին աջակցություն է ցուցաբերում այն աշակերտներին, որոնք ուսուցչի հրահանգներն ընկալելու և դրանց հետևելու համար ունն լրացուցիչ կարիք:

<< Զուգահեռ դասավանդում >>



Դասարանում իրականացվում է զուգահեռ դասավանդում երկու խմբերում : Որպես կանոն, դասարանը խմբերի բաժանելու սկզբունքը կախված է լինում աշակերտների գիտելիքների և կարողությունների մակարդակից կամ նրանց ուսումնառության ոճերի տարբերությունից կամ ընդհանրությունից : Դասի նպատակը երկու խմբերում նույնն է, սակայն ուսուցիչները իրենց ուղղորդումներով են աշխատում դմբերի հետև կիրառում մեթոդներ ըստ խմբի անդամների կարողությունների : Այս մոդելը քիչ է կիրառվում դասապրոցեսին:

<< Թիմային դասավանդում >>



Այս մոդելում ուսուցիչները դասավանդում են միասին՝ միևնույն նպատակով և միևնույն ուղղորդումներով՝ դասի ողջ ընթացքում իրար փոխլրացումներով: Այս մոդելի դեպքում հաճախ այնպես է լինում, որ ուսուցիչներից մեկը առավելապես առաջնորդում է դասի բովանդակային մասը, իսկ մյուս ուսուցիչը՝ հրահանգների, գործնական աշխատանքների մասը: Օրինակ որպես թիմային դասավանդում կարող են հանդես գալ՝ օտար լեզվի ուսուցչուհին և գրականության ուսուցչուհին: Երկու ուսուցիչները կարող են վերցնել մեկ թեմա և կատարել թիմային դասավանդումը: Որոշ դասավանդողներ այս մոտեցումն անվանում են մեկ ուղեղ երկու մարմիններում: Շատերն էլ այս մոտեցումը համարում են ամենաբարդը, սակայն առավել արդյունավետ, և այն մեծապես կախված է մասնագետների դասավանդման

Դասարան՝ 5-րդ

Առարկա՝ Անգլերեն (ամրապնդման դաս)

Դասի մոդելը՝ Թիմային դասավանդում

Դասի թեման՝ The Biscut boy

Դասի նպատակը՝ Ընթերցանության կարողությունների զարգացում, բառապաշարի զարգացում

Դասի ընթացքը՝ Խթնման փուլում տրվեցին հարցեր, արվեց մտագրոհ

Իմաստի ընկալման փուլում լսեցինք հեքիաթի ընթերցանությունը (ունկնդրման կարողությունները ստուգելու համար): Ուսուցչի օգնականը համակարգչի կբինետում միացրեց համապատասխան ձայնագրությունը, երեխաները լսեցն և համեմատեցին դասագրքի տեքստի հետ և պարզվեց հնչել է նույն տեքստը: Ուսուցչի օգնականը կարդում է հայերեն տեքստից նախադասությոնները , իսկ երեխաները գտնում են համարժեքները բնագրից:

Կշռադատման փուլում դասարանը բաժանվեց 2 խմբի: Բաժանումը տեղի ունեցավ գունավոր թղթերի միջոցով: Ուսուցչի օգնականը բաժանում է նկարներ , իսկ ուսուցիչը պահանջում է խմբերին տվյալ նկարները դասավորել ճիշտ հաջորդականությամբ՝ տեքստի բովանդակությանը համաձայն: Աշխատանքի ավարտից հետո աշխատանքը ստուգվեց և գնահատվեց:

Անդրադարձ՝ այն կատարվեց 3, 2, 1 մեթոդով: Պահանջում են կպչուն թղթերի վրա գրել 3 կենդանու անուն, 2 ուտելիքի անուն և մեկ նախադասություն բառերից մեկով:

Դասի կահավորում՝ դասագիրք , նկարներ, կպչուն թղթեր, երեխների կողմից արված նկարներ և քարտեր

Դասի ավարտին երեխաները կիմանան թեմայի բառերը կկարողանան ունկնդրելով համեմատել հայերեն և անգլերեն տեքստերը և կկարողանան արտահայտել իրենց կարծիքը հեքիաթի մասին:

Ահա համատեղ դասավանդումը տեղի ունեցավ թիմային մոդելի օգնությամբ, որտեղ հանդես եկան ուսուցիչը և ուսուցչի օգնականը համտեղ մեկ նպատակի շուրջ: Ի՞նչ է թիմային աշխատանքը:

Թիմային աշխատանքի բնութագրերը

Նպատակների սահմանում

Առաջադրանքների բաժանում

Գրաֆիկ

Հաղորդակցություն

Թիմային աշխատանքի առավելություններն ու թերությունները

Ի՞նչ է թիմային աշխատանքը:

Թիմային աշխատանքը դա է նախագիծ իրականացնելու մի խումբ մարդկանց ինտեգրված ջանք.

Թիմային աշխատանքը ենթադրում է 2 կամ ավելի մարդկանց համակարգում, որոնք ուղղված են ընդհանուր նպատակների իրականացմանը: Յուրաքանչյուր անդամ պետք է նպաստի աշխատանքի մի մասի իրականացմանը:

Թիմային աշխատանք անվանումն առաջացավ Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Ներկայումս դա արդյունավետ գործելաոճ է, որն ապահովում է տարբեր տեսակետներ և ծառայում է տնտեսական, քաղաքական և սոցիալական ոլորտներում ծագող հակամարտությունների առավել արդյունավետ լուծմանը:

Թիմային աշխատանքի բնութագրերը

Թիմում աշխատելը ենթադրում է տարբեր անհատականությունների համախմբում `նախագիծ կամ նպատակ իրականացնելու համար: Այս իմաստով, թիմային աշխատանքը խմբի բոլոր անդամների ջանքերն են:

Որպեսզի թիմային աշխատանքը հաճելի և արդյունավետ լինի, աշխատանքային թիմերը պետք է հաշվի առնեն որոշ կետեր, որոնք կօգնեն չեղյալ համարել խմբի դինամիկային խանգարող հատկությունները:

Նպատակների սահմանում

Թիմում աշխատելը նախագծեր իրականացնելու կամ հատուկ նպատակներին հասնելու միջոց է: Այս իմաստով, նպատակների սահմանումը, ինչպես ցանկացած նախագծում, պետք է նախապես հայտնի լինի այն բոլոր անդամների կողմից, որոնք կազմելու են աշխատանքային խումբը:

Առաջադրանքների բաժանում

Թիմում աշխատել սկսելիս խորհուրդ է տրվում հստակորեն սահմանել առաջադրանքների բաժանումը: Տնային առաջադրանքներն ընդհանուր առմամբ

կատարվում են միասին: Objectivesրագրի նպատակների ներկայացման ընթացքում անդամներից յուրաքանչյուրը կկարողանա իմանալ այն ոլորտներում, որտեղ նրանք կարող են ավելի արդյունավետ լինել կամ ավելի լավ ներդրում ունենալ:

Գրաֆիկ

Երբ նախագծում կան մի քանի պատասխանատու մարդիկ, անհրաժեշտ է ունենալ ծրագրի ժամանակի կառավարում `յուրաքանչյուր անդամի ռիթմը համակարգելու համար: Ժամանակացույցն ունի այս գործառույթը:

Այս եղանակով, չնայած առաջադրանքները բաժանվել են մի քանիսի, վերջնաժամկետները թույլ կտան կտորները հավաքել և քննարկել հնարավոր խնդիրները կամ գաղափարները:

Հաղորդակցություն

Սոցիալականացած սոցիալական հարաբերությունների մեջ հաղորդակցությունը անհրաժեշտ է, որպեսզի այն ներդաշնակ լինի: Աշխատանքի ճնշումը կարող է ավելի բարդացնել հասակակիցների հետ կապերը:

Թիմում աշխատելիս հաղորդակցության ուղիները և ձևերը պետք է լավ հաստատված լինեն: Որոշակի տեղեկատվության ուղղությունը նույնպես կարևոր է, որպեսզի հաղորդակցությունը լինի հեղուկ և չխանգարի ուրիշի աշխատանքին:

Թիմային աշխատանքի առավելություններն ու թերությունները

Խմբի բոլոր դինամիկաներն ունեն իրենց առավելություններն ու թերությունները: Ընդհանուր առմամբ, կարող ենք ասել, որ այն խթանում է ստեղծագործականությունը, բնականաբար խթանում, ապակենտրոնացնում է գործառույթները թիմի անդամների միջև, ազատորեն փոխանակվում է փորձով և գիտելիքներով և օպտիմիզացնում է անդամներից յուրաքանչյուրի ժամանակը և գիտելիքները:

Նույն կերպ կան նաև թիմային աշխատանքի այնպիսի թերություններ, ինչպիսիք են ` թիմի անդամների միջև շեղելը, անդամների միջև բախումները, բարդ անհատականությունները կամ առաջադրանքների անարդար բաշխումը:

Թիմային աշխատանքի հարցում կարևորն այն է, որ բոլոր անդամները պատասխանատու լինեն ծրագրի համար: Որ անդամների միջև կա լավ մակարդակի համակարգում, ներդաշնակություն, համերաշխություն, փոխըմբռնում և լավ հարաբերություններ:

<< Այլընտրանքային դասավանդում >>



Այս մոդելի էությունը կայանում է նրանում , որ ուսուցիչներից մեկը աշխատում է դասարանի աշակերտների մեծ խմբի հետ , իսկ մյուս ուսուցիչը նույն ժամանակում աշխատում է մեկ այլ՝ ավելի փոքր խմբի հետ՝ ունենալով այլ՝ հաճախ անհատական նպատակներ ու կիրառելով այլ ուղղորդումներ: Հիմնականում այս ամենն կիրառվում է այն աշակերտների արդյունավետ ներգրավման ու դասավանդման համար , ովքեր ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք:

<< Ուսուցման կենտրոնների տեղափոխում >>



Այս մոդելում ուսուցիչը դասարանի աշակերտներին բաժանում է խմբի՝ ըստ դասարանների կամ աշակերտներիի գիտելիքների կարողությունների մակարդակի և սովորելու արագության: Դասարանում սեղանները կահավորում են և կազմվում են 3 առանձնացված կենտրոններ: Այդ կենտրոններից յամեն մեկը նախատեսված է դասի երեք հիմնական փուլերի համար՝

1 Նոր նյութի մատուցում
2 Ուղղորդված գործնական աշխատանք
3 Ինքնուրույն աշխատանք

Եզրակացություն

Հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ համատեղ դասավանդման միջոցով ուսուցիչները կկարողանան արդյունավետ ճանապարհներով բարելավել սովորողների բազմազան կարիքները: Ընդ որում համատեղ դասվանդման գերագույն նպատակն է, համատեղել և ընդլայնել յուրաքանչյուր մասնագետի

փորձագիտությունը՝ ի շահ բոլոր սովորողների և պլանավորել ու ստեղծել հատուկ մշակված ներառման մշակույթ դասարանում և դպրոցական համայնքում:

Պետք է նշել, որ եթե երկու մասնագետներ կարողանան համակարգված և հետևողականորեն աշխատել, համատեղ դասվանդման ընթացքում կիրառել աջակցված, զուգահեռ և թիմային մոդելները, ապա բոլոր սովորողների կրթական կարիքները կստանան լիարժեք լուծում և դասպրոցեսը կդառնա առավել արդյունավետ: Դասապրոցեսի ժամանակ համատեղվում են ուսուցիչների ուսումնական ծրագրի ու առարկայի բովանդակային իմացությունը: Իսկ դպրոցի ռեսուրսների արդյունավետ օգտագործումը կապահովի ուսումնառության առավել հաճելի միջվայր՝ լավագույնս բարելավելով ուսումնական ամենատարբեր կարիքներ ունեցող երեխաներին անհրաժեշտ պայմաններով:

Ուսուցչի պարագայում համատեղ դասավանդումը , նոր հմտությունների , մեթոդների ձեռք բերումն է համատեղ դասավանդման ընթացքում : Հնարավորություն է ընձեռում ուսուցչին և ուսուցչի օգնականին առավել արդյունավետ դաս կառուցել: Այն դրական և մասնագիտական ազդեցություն է ունենում ինչպես ոսուցչի օգնականի պարագայում , այնպես էլ երեխաների շրջանակներում: Թիմային մեթոդը իրականացնելիս տեղի է ունենում նոր կարողությունների և հմտությունների ձեռքբերում:

«Համատեղ դասավանդում» երկու կամ ավելի մանկավարժների կողմից, ընդհանուր տարածքում հավասար պատասխանատվությամբ իրականացվող ուսուցումն է, որի պլանավորմանը, աջակցող, զուգահեռ, թիմային և այլընտրանքային մոդելներով դասերի մատուցման և գնահատման մեթոդները բավականին հետաքրքիր են և արդյունավետ:

Այսպիսի ասավանդման արդյունքում ուսուցիչների նպատակն է արդյունավետ ուղիներով կարողանալ բավարարել սովորողների բազմազան կարիքները: Ընդ որում՝ համատեղ դասավանդման գերագույն նպատակն է համատեղել և ընդլայնել յուրաքանչյուր մասնագետի փորձագիտությունը՝ ի շահ բոլոր սովորողների և պլանավորել ու :

Ծրագրեցինք և կազմակերպեցինք ավելի արդյունավետ գիտելիքի ձեռքբերումը տարբեր դասարաններում, փորձարկելով և անցկացնելով համատեղ դասավանդում՝ տարբեր մոդելներով:

Տարբեր դասարաններում փորձարկեցինք ՈՒՀՁ-ի կիրառումանը և նրա միջոցով համընդհանուր ներառման ապահովմանը:

ՈՒՀՁ-ի միջոցով նպաստեցինք դասանյութի առավել մեծ ծավալների յուրացմանը:

Համատեղ դասավանդման և դասանյութի բազմատեսակ մատուցման միջոցով և ապահովեցինք համընդհանուր ներառումը տարբեր բազմազանությամբ երեխաների համար, ինչպես նաև դասաժամին ձանձրույթի բացառում:

Դասավանդման տարբեր ռազմավարությունների կիրառման միջոցով բավարար ժամանակի տրամադրեցինք ԿԱՊԿՈՒ՝ սովորողներին ապահովելով և վերջիններիս մոտիվացիայի բարձրացումը:

Առաջարկություն

- Նորօրյա դպրոցում համատեղ դասավանդման բոլոր մոդելները դարձնել աշխատանքի անբաժանելի մաս
- Համատեղ դասավանդումն իրականացնել ոչ թե ձևականությունն ապահովելու, այլ կրթադաստիարակչական գործընթացում արդյունավետությունը բարձրացնելու, դասարանի բազմազանությունը խրախուսելու, բոլոր աշակերտների ներուժն արդյունավետորեն կրառելու և հետաքրքրությունը բարձրացնելու նպատակով:
- Համատեղ դասավանդման տարբեր մոդելների հաճախակի կիրառումը կնպաստի հետաքրքրության, մոտիվացիայի բարձրացմանը:
- Թիմով ավելի դյուրին է վերլուծություն և անդրադարձ կատարելը արդյունքին ու գործընթացին, որն էլ կհեշտացնի բարելավումը:
- Առաջ տանել համատեղ դասավանդման իրականացումը, կարևորելով համատեղ դասավանդման անհրաժեշտությունը ՀՀ-ի կրթական հաստատություններում և մեր դպրոցում:

Օգտագործված գրականություն և հղումներ

- Ներառական կրթության ռազմավարություններ UNICEF 2019
  Խմբագիրներ՝ Մասնագիտական և տեխնիկական Հեղինակներ Ռենատա Տիքա, Մինեսոթայի համալսարան, ԱՄՆ, Բրայեն Հ. Էբերի, Մինեսոթայի համալսարան, ԱՄՆ , Քրիսթոֆեր Ջոնսթոն, Մինեսոթայի համալսարան, ԱՄՆ և այլք
  Հեղինակներ՝ Խաչատրյան Մանուկ ,Դավթյան Միեր
  Դասավանդման ժամանակակից մոտեցումներ և մեթոդներ: Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2019: Հեղինակներ՝ Խաչատրյան Մանուկ ,Դավթյան Միեր
- https://lalamanoukyan.wordpress.com/2014/06/05/cooperative-teaching/